Ջատագովության համառոտագիր

Հայաստանի հոգեկան առողջության համակարգի բարեփոխումները՝ մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան

Սույն բարեփոխումների խթանման համառոտագիրը հիմնված է համապարփակ ուսումնասիրության վրա, որի շրջանակներում գնահատվել է Հայաստանի հոգեկան առողջության համակարգը՝ կենտրոնանալով իրավական եւ քաղաքականության շրջանակների, ծառայությունների մատուցման եւ միջազգային պարտավորությունների կատարման վրա: Հետազոտությունը մեկտեղել է փաստաթղթերի վերլուծության, շահագրգիռ կողմերի հետ հարցազրույցների եւ դաշտային տվյալների հավաքագրման մեթոդները: Մանրամասն արդյունքները հասանելի են կից զեկույցում:

Չնայած նրան, որ Հայաստանը վավերացրել է հիմնական միջազգային պայմանագրերը եւ ընդունել որոշ բարեփոխումների քաղաքականություններ, գործնականում իրականացումը դեռեւս զգալիորեն հետ է մնում պաշտոնապես ստանձնված հանձնառություններից: Հոգեբուժական ծառայությունները շարունակում են մնալ խիստ ինստիտուցիոնալացված, հարկադրական գործելաոճերը պահպանվում են, համայնքահենք այլընտրանքներն էլ թերզարգացած են: Միջգերատեսչական համագործկցության բացը, ֆինանսական պլանավորման խոցելիությունը եւ իրավունքահեն կառավարման բացակայությունը շարունակում են խոչընդոտել էական բարեփոխումները: Առաջարկությունները թիրախավորում են այս արմատական պատճառները՝ Հայաստանի հոգեկան առողջության համակարգը միջազգային մարդու իրավունքների նորմերին համահունչ դարձնելու նպատակով:

Հայաստանում իրավունքահեն հոգեկան առողջության համակարգ հնարավոր է ունենալ նպատակային օրենսդրական բարեփոխումների, ծառայությունների ապակենտրոնացման եւ մասնակցային քաղաքականության մշակման և իրականացման միջոցով:

Առաջնահերթ առաջարկություններ

- Փոփոխել օրենսդրությունը՝ ՀՈՒԱԻԿ-ի եւ մարդու իրավունքների միջազգային այլ չափանիշների հետ լիարժեք համապատասխանություն ապահովելու, մասնավորապես՝ ոչ հոժարակամ հոսպիտալացումը եւ բուժման հարկադրական մեթոդներն արգելելու նպատակով:
- Բարեփոխել անձին անգործունակ ճանաչելու պրակտիկան՝ անձի փոխարեն որոշում կայացնողի ինստիտուտը վերացնելու եւ աջակցության միջոցով որոշումների կայացման մեխանիզմ ներդնելու համար:
- Առաջնահերթություն տալ համայնքահենք հոգեկան առողջության ծառայությունների ստեղծմանն ու զարգացմանն ամբողջ երկրի տարածքում, հատկապես՝ գյուղական շրջաններում՝ ապահովելով կայուն ֆինանսավորում:

- Ամրապնդել միջգերատեսչական համակարգումը հոգեկան առողջության բարեփոխումների պլանավորման եւ իրականացման գործընթացներում:
- Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ներգրավել քաղաքականության մշակման, ջատագովության եւ իրազեկման նախաձեռնություններում:
- Իրականացնել համազգային հանրային կրթական արշավներ՝ խարանը նվազեցնելու եւ հոգեկան առողջության պահպանմանը նպաստող վարքագիծը խթանելու համար:

Հեղինակ՝ Սառա Ղազարյան | sghazaryan@hcav.am

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության պատասխանատվությունը կրում է բացառապես հեղինակը՝ Սառա Ղազարյանը, եւ պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները: